Գավառի բնապահպանական տեղեկատվության հասարակական Օրհուս կենտրոն

Public Environmental Information Aarhus Center of Gavar

Հասցե. ՀՀ, 1201, ք.Գավառ, ԿենտրոնականՀրապարակ 7
Հեռ. +/ 374/ 77 76 46 41, +/ 374/ 264 6 15 11
Էլ. փոստblejanli@gmail.com

Address Central Square 7, Gavar, 1201, RA
Tel. +/ 374/ 77 76 46 41, +/ 374/ 264 6 15 11
E-mail blejanli@gmail.com

AA-007

9 օգոստոսի 2018թ.

ՀՀ բնապահպանության նախարար
Էրիկ Գրիգորյանին

Տեղեկատվության ստացման կրկնակի հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

Մայիսի 15-ին Գավառի Օրհուս կենտրոնի կողմից թիվ AA-005 գրությունով դիմել էինք Ձեզ ստանալու ներքոհիշյալ հարցերի պատասխանները(կից նաև գրությունը):

Հունիսի 19 -ին թիվ AA-006 կրկնակի գրությունով կրկին դիմել էինք Ձեզ լրացնելու Ձեր կողմից ուղարկված նամակը, քանի որ պատասխանը թերի էր, սակայն արդեն 2 ամիս է ոչ մի արձագանք չենք ստացել:

Հարգելի պարոն նախարար

Խնդրում եմ պատշաճ ժամկետներում պատասխանել նամակին և տեղեկացնել, թե ինչ գործողություններ են պլանավորվում նախարարության կողմից.

- Օրհուսի Կոնվենցիայի իրականացման ուղղությամբ,
- ՀՀ Սահմանադրության կատարման ուղղությամբ,
- Օրհուս կենտրոնների պահպանման և վերագործարկման ուղղությամբ (օրինակ Գավառի Օրհուս կենտրոնը փակվել է /գույքագրվել ու կապարակնքվել, որից հետո մարզպետարանն այդ սենյակն իր կարիքների համար է օգտագործում, Օրհուս կենտրոնի գույքն էլ հետը, ավելին, մարզպետարանը կենտրոնը գրադարանը նվիրել է ինչ որ դրպրոցի, կրկին հաշվի չառնելով, որ գույքագրման ընթացքում առկա գրականության ոչ բոլոր մասն էր Օրհուս կենտրոնին/ ՀՀ բնապահպանության նախարարի հասարակական կարգով խորհրդական Գալուստ Նանյանի միջնորդությամբ, ում գործողությունների օրինականությունը դեռ պարզել է պետք):

Վերը նշվածի հետ միաժամանակ խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել.

- 2017թ.-ի Օրհուսի Կոնվենցիայի ազգային զեկույցը
- 2016-2017թթ.-ի և 2018թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում երկրում Կոնվենցիայի ուղղությամբ կատարված գործողությունները
- Կոնվենցիայի իրականացման 2018թ.-ի գործողությունների պլանը
- Առաջիկա 5 տարիների Կոնվենցիայի իրականացման գործողությունների պլանը!

Սակայն, 24.05.2018թ.-ի թիվ 5/07.1/50964 գրությամբ պատասխան է տրվել մեր գրությամբ պահանջվող տեղեկատվության միայն մեկ կետին, այն էլ մասամբ՝ տեղեկանք 2017թ.-ի Օրհուսի Կոնվենցիայի իրականացման մասին:

Հարգելի պարոն նախարար,

Խնդրում եմ օրենքով սահմանված կարգով տրամադրել տեղեկատվություն մեր գրությամբ բարձրացված բոլոր հարցերին, նաև խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն վերջին տաս տարվա ընթացքում Օրհուսի Կոնվենցիայի իրականացման համար ծախսված գումարների մասին՝ յուրաքանչյուր տարի և գործողության համար առանձին առանձին, նշելով նաև այլ աղբյուրները:

Կանխավ շնորհակալ եմ

Հարգանքով՝
Լիաննա Ասոյան՝ Գավառի ՕԿ համակարգող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

SECRETARY GENERAL

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 1001060@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
🖷 (374 11) 818 506

№ 5/08-2/51645
«17» «08» 2018 թ.

Գավառի բնապահպանական տեղեկատվական
Օրհուս կենտրոնի համակարգող տիկին Լ. Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի օգոստոսի 9-ի N AA-007 գրության հայտնում եմ, որ համաձայն <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի՝ հարցադրմանը կպատասխանվի 30-օրյա ժամկետում, քանի որ գրությամբ բարձրացված հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք:

Կից ներկայացնում եմ 2018 թվականի առաջին կիսամյակում Օրհուսի կոնվենցիայի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Հ.Հովհաննիսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի իրականացված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ՝ 2018թ. առաջին կիսամյակի կտրվածքով

13.03.2018թ. «Բնապահպանական քաղաքականությունը և սոցիալական պատասխանատվությունը» թեմայով սեմինար է անցկացվել՝ հայ-ամերիկյան առևտրային պալատի աջակցությամբ, որի ժամանակ Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգողը առևտրային պալատի ընկերություններին և հանրության լայն շրջանակին ներկայացրել է բնապահպանական ժողովրդավարությունը և ընկերությունների իրավունքները թեմայով զեկույց:

29.03.2018 թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբանների համար «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգողի կողմից անցկացվել է վերապատրաստման դասընթաց՝ «Միջազգային իրավունքի աղբյուրները և Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության հենասյունով իրավական զարգացումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով զեկույց:

Փաստաբաններին ներկայացվել են Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության հենասյան իրականացման ուղղությամբ ՀՀ օրենսդրական զարգացումները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի լրացումները և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, որոնք ամրագրում են հասարակական կազմակերպությունների իրավունքն՝ իրենց շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնելու շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Քննարկվել են բնապահպանական տեղեկատվության հասանելիության և տարածման ապահովման խնդիրները, որոշումների կայացմանը մասնակցության իրավունքը և բնապահպանական ժողովրդավարության կայացման գործում փաստաբանների դերը:

2018 թվականի մայիս ամսին վերապատրաստման դասընթացներ են անցկացվել ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսանողների համար, որոնք իրազեկվել են Օրհուսի կոնվենցիայի մասին:

2018 թվականի հունիսի 19-ից 21-ը Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգողը մասնակցել է Կողմերի աշխատանքային խմբի 22-րդ հանդիպմանը և Օրհուսի կոնվենցիայի քսանամյակի հոբելյանական միջոցառմանը: